ԿԸՀ 2018թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2018թ. արժեքը հավասար է **35**-ի, իսկ ստանդարտ սխալի չափը՝ 4.00-ի: Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012-ից մինչև 2018թ. ընկած ժամանակահատվածում:

Գծապատկեր 1.

ԿԸՀ դասակարգման 2018թ. աղյուսակում Հայաստանը ***Ալժիրի, Բրազիլիայի***, ***Կոտ դ'Իվուարի, Եգիպտոսի, Սալվադորի, Պերուի, Թիմոր-Լեստեի*** և ***Զամբիայի*** հետ **180** երկրների շարքում կիսում է **105-ից 113-րդ տեղերը**: Նախորդ՝ 2017թ. համեմատ Հայաստանի ԿԸՀ համաթվի արժեքը չի փոխվել[1], սակայն այն ժամանակ նա նույն **180** երկրների շարքում կիսում էր **107-ից 110-րդ** տեղերը: Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ Հայաստանը շարունակում է ներառված մնալ ***Արևելյան Եվրոպա–Կենտրոնական Ասիա*** տարածաշրջանի մեջ: Աղյուսակ 1-ում բերված է 2018թ. ԿԸՀ Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանի դասակարգման աղյուսակը: Այդ տարածաշրջանի մեջ ներառված են բալկանյան երկրներից ***Չեռնոգորիան***, ***Սերբիան***, ***Բոսնիա և Հերցեգովինան***, ***Ալբանիան***, ***Մակեդոնիան*** և ***Կոսովոն***, նախկին խորհրդային հանրապետությունները՝ բացի ԵՄ անդամ բալթյան հանրապետություններից, ինչպես նաև ***Թուրքիան***:

Աղյուսակ 1.

[1] Ինչպես հայտնի է, Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) հանդիսանում է բաղադրյալ համաթիվ, որը հանրային ոլորտում առկա կոռուպցիայի վերաբերյալ փորձագետների և գործարար ոլորտում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց ընկալումը չափող միջազգային մի շարք հայտնի կազմակերպությունների հետազոտությունների արդյունքում ստացված համաթվերի համադրությունն է: Հայաստանի 2018թ. ԿԸՀ արժեքը ստացվել է 6 այդպիսի հետազոտությունների արդյունքների միջոցով ստացված համաթվերի համադրության արդյունքում (տե՛ս «2018 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները» նյութը): Ինչպես երևում է այդ նյութից, այդ հետազոտություններից 5-ը կատարվել են մինչև 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը, և միայն մեկի իրականացման ժամանակահատվածն է (2017 սեպտեմբեր – 2018 օգոստոս) մասամբ ընդգրկում հետհեղափոխական ժամանակահատվածը: Այսպիսով, կարելի է պնդել, որ 2018թ. համաթվի արժեքը շարունակում է համարյա ամբողջովին արտացոլել Հայաստանի հանրային ոլորտում կոռուպցիայի իրավիճակը նախքան թավշյա հեղափոխությունը:

Երկրի դիրք	Երկիր	2018 թ. ԿԸՀ արժեքը	Աղբյուրների թիվը	AFDB[2]	BF (SGI)	BF (TI)	EIU	FH	GI	IMD	PERC	PRS	WB	WEF	WJP	VDEM
41	Վրաստան	**58**	6			53		50	47					70	63	67
67	Չեռնոգորիա	**45**	5			53		47	47					52		28
70	Բելառուս	**44**	7			37	55	33	47			32			57	50
78	Թուրքիա	**41**	9		26	41	37		47	48		41		55	41	29
87	Սերբիա	**39**	8			49	37	53	35			32		44	34	32
89	Բոսնիա և Հերցեգովինա	**38**	7			41	37	44	35					29	39	38
93	Կոսովո	**37**	5			37		36	35				35			43
93	Մակեդոնիա	**37**	7			41	20	47	35					33	43	39
99	Ալբանիա	**36**	8			37	37	42	35			41		39	30	29
105	Հայաստան	**35**	6			33		39	35			32		51		21
117	Մոլդովա	**33**	9			33	37	33	47			32	27	29	28	26
120	Ուկրաինա	**32**	9			41	20	36	35	29		32		34	36	22
124	Ղազախստան	**31**	9			25	20	24	35	48		27		46	34	17
132	Ղրղզստան	**29**	7			37		30	22				35	31	27	20
138	Ռուսաստան	**28**	9			33	20	24	22	34		24		42	33	21
152	Ադրբեջան	**25**	6			25	37	21	35			24				9
152	Տաջիկստան	**25**	6			17		21	22				27	52		12
158	Ուզբեկստան	**23**	7			21	20	21	22				18		34	23
161	Թուրքմենստան	**20**	5			21	20	21	22							15

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը (2017թ. նա Մակեդոնիայի հետ կիսում էր 9-10-րդ տեղերը): Այդ տարածաշրջանում Հայաստանն ինչպես և 2017թ. նախկին խորհրդային հանրապետություններից զիջում է ***Վրաստանին*** և ***Բելառուսին***, որոնց ԿԸՀ 2018թ. համաթվերի արժեքներն են համապատասխանաբար **58** (**41**-ից **44**-րդ տեղեր՝ ամենաբարձրը տարածաշրջանում) և **44** (**70**-ից **72**-րդ տեղեր՝ երրորդը տարածաշրջանում):

Ինչ վերաբերում է իր հարևաններին, ապա, ինչպես և նախորդ տարիներին, Հայաստանը, շարունակում է զիջել ոչ միայն ***Վրաստանին***, այլ նաև ***Թուրքիային***, որի 2018թ. ԿԸՀ համաթվի

[2] Այս և հաջորդ 12 հապավումները հանդիսանում են 2018թ. ԿԸՀ հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների հապավումները: Դրանք բացված են «2018թ. ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները» նյութում:

արժեքը հավասար է **41**-ի (**78**-ից **86**-րդ տեղեր): Հայաստանի մյուս երկու հարևանները՝ ***Ադրբեջանը*** (**152**-ից **156**-րդ տեղեր) և ***Իրանը*** (**138**-ից **143**-րդ տեղեր)**,** շարունակում են զիջել նրան: 2018թ. նրանց ԿԸՀ համաթվերի արժեքներն են, համապատասխանաբար, **25** և **28**: Հարկ է նշել, որ Ադրբեջանը գրանցել է ԿԸՀ 2018թ. դասակարգման աղյուսակում ներառված երկրների մեջ ամենամեծ նահանջը՝ 6 կետ (2017թ. նրա ԿԸՀ արժեքը հավասար էր 31-ի): Գծապատկեր 2-ում բերված են Հայաստանի և իր հարևան երկրների ԿԸՀ 2012-2018թթ. արժեքները:

Գծապատկեր 2.



Բելառուսից բացի, ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ԿԸՀ արժեքները շարունակում են ավելի ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ արժեքից: Մասնավորապես՝ ***Ռուսաստանի*** 2018թ. ԿԸՀ արժեքը **28** միավոր է (**138**-ից **143**-րդ տեղեր), ***Ղրղզստանինը***՝ **29** (**132**-ից **137**-րդ տեղեր), իսկ ***Ղազախստանինը***՝ **31** միավոր (**124**-ից **128**-րդ տեղեր): Գծապատկեր 3-ում բերված են Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների ԿԸՀ 2012-2018թթ. արժեքները:

Գծապատկեր 3.


ՀԱՅԱՍՏԱՆԻ և ԵԱՏՄ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ
2012-2018ԹԹ. ԿԸՀ ԱՐԺԵՔՆԵՐԸ
50
40
30
20
0
2012
2013
2014
2015
2016
2017
2018
Հայաստան
Ռուսաստան
Բելառուս
Ղազախստան
Ղրղզստան